



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
16 մայիսի 2017 թվականի N 101-Ա

Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Թ Ե Մ.


1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռազմիկ Ավետիսյանին 2017 թվականի մայիսի 17-ից 20-ը ներառյալ գործուղել Գորիս և Սիսիան համայնքներ՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի մասնագիտական խմբի կողմից իրականացվող՝ 2014-2016թթ. ՀՀ պետական բյուջեից և պետական այլ աղբյուրներից հատկացված միջոցների հաշվին կատարված համաշինարարական աշխատանքների արդյունավետության և նախատեսված ծախսերի կատարման իսկության ստուգումներին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 2-ի «ՀՀ Սյունիքի մարզպետարանում ստուգում իրականացնելու մասին» N 24-Ա հանձնարարագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. մայիսի 16
ք. Կապան